ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Մի շարք վարչական իրավախախտումների համար կիրառված տուգանքների համաներման մասին» Կ-344-06.07.2018-ՊԻՄԻ-011/0 օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	Օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվել է նախատեսել կարգավորումներ, համաձայն որոնց՝ սույն օրենքը ուժի մեջ մտնելու օրվանից համապատասխան վարչական իրավախախտումներ կատարած անձինք կհամարվեն վարչական տույժի չենթարկված՝ հաշվի առնելով Օրենքի նախագծով համաներման կիրառման վերաբերյալ նախատեսված բացառությունները:	Նախագիծը խմբագրվել է:	**Ընդունվել է**
2.	**Կառավարություն**	Օրենքի նախագծի փաթեթ	Առաջարկվել է համապատասխան փոփոխություններ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում՝ նախատեսելով անհրաժեշտ իրավական հիմք համաներման մասին օրենք ընդունելու, ինչպես նաև օրենսգրքում կիրառվող եզրույթները ՀՀ Սահմանադրության տերմինաբանությանը համապատասխանեցնելու համար:	Նախագծի փաթեթը լրացվել է նոր օրենքի նախագծով:	**Ընդունվել է**
3.	**«Ծառուկյան» խմբակցություն**	Օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվել է «2017 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2018 թվականի հուլիսի 1-ը» բառերով:	Չի ընդունվել: Նպատակահարմար է թողնել անփոփոխ:	**Չի ընդունվել**

4	**«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն**	Օրենքի նախագիծ	Առաջարկում ենք համաներման կիրառման շրջանակն ընդլայնել, այն տարածել նաև տուգանքի գումարը բարեխիղճ վճարողների վրա: Առաջարկում ենք նաև տուգանքի գումարը բարեխիղճ վճարողին վերադարձնել իր վճարած գումարը դիմելու օրվանից 30 օրվա ընթացքում: Յուրաքանչյուր անգամ համաներում կիրառելով միայն ոչ բարեխիղճ վճարողների շրջանակներում, նպաստում ենք վերջիններիս կողմից իրավախախտումները շարունակելուն ուղղված գործընթացին, ինչպես նաև դրա արդյունքում պակասում են բարեխիղճ վճարողների թիվը: Վերջինների մոտ ձևավորվում է կարծիք, որ հնարավոր է չվճարել տուգանքի գումարը, որովհետև նորից կընդունվի համաներման կիրառման մասին օրենք և ամբողջ վճարվելիք տուգանքների գումարները կզրոյացվեն:	Չի ընդունվել:	**Չի ընդունվել**